Հավելված N 2
ՀՀ կառավարության 2020 թվականի
մայիսի 21-ի N 784 - Ն որոշման

Հ/հ	Պետական օժանդակության տրամադրող մարմնի անվանումը	Պետական օժանդակության տրամադրման պահը (շարունակական բնույթով տրամադրվող պետական օժանդակությունների դեպքում՝ 1-ին անգամ տրամադրելու պահը)	Տրամադրված պետական օժանդակության աղբյուրը (պետական կամ համայնքի բյուջեից տրամադրված ֆինանսական միջոցներ, հանրային այլ ռեսուրսներ) *	Ծրագրի անվանումը, որի շրջանակում տրամադրվել է պետական օժանդակություն	Տրամադրված պետական օժանդակության իրավական ակտի համարը, ընդունման տարին, ամիսը և օրը*	Պետական օժանդակության տրամադրման վերաբերյալ իրավական ակտի համարը, ընդունման տարին, ամիսը և օրը*	Տրամադրված պետական օժանդակության տեսակը կամ դրսևորման ձևը (դրամաշնորհ, թույլտվություն, ֆինանսական աջակցություն, օգնություն, փոխառություն, վարկ, պետական տուրքի կամ հարկի տարաժամկետ վճարելու թույլտվություն, մաքսային և հարկային մարմինների կողմից հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարների վճարման ժամկետի հետաձգում, մաքսատուրքից կամ հարկային վճարից ազատում և այլն)	Պետական օժանդակության տրամադրման նպատակի նկարագրությունը	Պետական օժանդակության ստանալու համար անհրաժեշտ պայմանները/չափանիշները/պահանջները*	Տարածքը (մարզ/համայնք/քաղաք/վարչական միավոր և այլն), որի նկատմամբ կիրառելի է պետական օժանդակությունը*	Ոլորտը, որի նկատմամբ կիրառելի է պետական օժանդակությունը*	Տրամադրված պետական օժանդակության ընդհանուր չափը/քանակը*		Շարունակվող պետական օժանդակության դեպքում՝ տրամադրված պետական օժանդակության ընդհանուր չափը/քանակը՝ ըստ փուլերի			Պետական օժանդակության տրամադրման ժամանակահատվածը	Պետական օժանդակություն ստացողներ					Արդյո՞ք պետական օժանդակությունը նպատակադրված է անկանխատեսելի և հրատապ լուծում պահանջող հարցերի լուծմանը կամ արտակարգ կամ ֆորս մաժորային իրավիճակի հետևանքով առաջացած խնդիրների կարգավորմանը	Արդյո՞ք առկա են պետական տրամադրումից հետո պետական օժանդակության նկատմամբ վերահսկողության մեխանիզմներ*	Արդյո՞ք առկա են պետական տրամադրումից հետո պետական օժանդակության սահմանաչափի արդյունավետության գնահատման մեխանիզմներ	Արդյո՞ք պետական օժանդակությունը տրամադրվել է ընտրողականությամբ *	Արդյո՞ք պետական օժանդակությունը տրամադրվել է «առավել վաղ դիմորդն ունի առաջնահերթություն» սկզբունքի հիման վրա*
												Քանակը և չափման միավորը	Արժեքը/գինը	Փաստացի տրամադրված չափը/քանակը	Ցուրաքանչյուր փուլի համար տրամադրված/խախտված եղած չափը/քանակը և ժամկետները	Պետական օժանդակության ընդհանուր չափը		Անվանումը/անունը, ազգանունը	ՀՎՀՀ	Հասցեն	Հեռախոսահամարը	Գործունեության ոլորտը (ոլորտները)					
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13		14			15	16					17	18	19	20	21
1																							☐ Այո ☐ Ոչ	☐ Այո ☐ Ոչ	☐ Այո ☐ Ոչ	☐ Այո ☐ Ոչ	☐ Այո ☐ Ոչ
2																							☐ Այո ☐ Ոչ	☐ Այո ☐ Ոչ	☐ Այո ☐ Ոչ	☐ Այո ☐ Ոչ	☐ Այո ☐ Ոչ
3																							☐ Այո ☐ Ոչ	☐ Այո ☐ Ոչ	☐ Այո ☐ Ոչ	☐ Այո ☐ Ոչ	☐ Այո ☐ Ոչ
...																							☐ Այո ☐ Ոչ	☐ Այո ☐ Ոչ	☐ Այո ☐ Ոչ	☐ Այո ☐ Ոչ	☐ Այո ☐ Ոչ

*Ծանոթագրություն. Եթե տրամադրվող պետական օժանդակության ձևը հարկից, տուրքից կամ պարտադիր վճարից ազատումն է, ապա նշվում է այն միջոցը (պետական բյուջե, հանրային բյուջե կամ այլ ռեսուրս), որին պետք է ուղղվեր հարկը, տուրքը կամ վճարը, եթե չլիներ պետական օժանդակության տրամադրումը:

*Ծանոթագրություն. սույն ենթակետում նշվում է այն իրավական հիմքը, որը լիազորում է պետական օժանդակություն տրամադրող մարմնին տրամադրել այդ պետական օժանդակությունը:

*Ծանոթագրություն. սույն ենթակետում նշվում է այն իրավական ակտը (որոշում, հրաման և այլն), որով պետական օժանդակություն ստացողին տրվել է պետական օժանդակություն: Եթե պետական օժանդակության տրամադրման հիման իրավական ակտի ընդունում նախատեսված չէ, ապա պետք է նշել այն գործողության կատարման տարին, ամիսը և օրը, ինչպես նաև նույնականացման այլ հատկանիշները (օրինակ, պայմանագրի կնքման ամսաթիվ, համար և այլն), որոնց կատարմամբ տրամադրվել է պետական օժանդակությունը:

10*Ծանոթագրություն. Սույն ենթակետում նշվում են այն պայմանները/չափանիշները/պահանջները, որոնց անհրաժեշտ է բավարարել պետական օժանդակություն ստանալու համար: Եթե այդ չափանիշները սահմանված են իրավական ակտով, նշվեց այդ իրավական ակտի անվանումը, ընդունման տարեթիվը և համարը: Եթե իրավական ակտը հրապարակված չէ, անհրաժեշտ է կցել համապատասխան ակտը:

11*Ծանոթագրություն. Սույն ենթակետում նշվում է այն տարածքը (Հայաստանի Հանրապետության վարչական միավորները՝ մարզը, քաղաքը, համայնքը և այլն), որի համար նախատեսված է պետական օժանդակության տրամադրումը:

12*Ծանոթագրություն. Սույն ենթակետում նշվում է այն ոլորտը, որի համար նախատեսված է պետական օժանդակության տրամադրումը:

13*Ծանոթագրություն. Եթե պետական օժանդակությունը արտահայտված է բնեղենով, ապա նշվում է ինչպես տրամադրված օժանդակության քանակը և չափման միավորը, այնպես էլ գինը/արժեքը: Եթե պետական օժանդակությունը տրամադրվել է գումարային/արժեքային արտահայտությամբ, ապա նշվում է գինը՝ արտահայտված դրամով:

18*Ծանոթագրություն. Սույն ենթակետը վերաբերում է տրամադրումից հետո պետական օժանդակության նկատմամբ վերահսկողության՝ իրավական ակտերով կամ պայմանագրով սահմանված մեխանիզմի կամ մեխանիզմների առկայությանը:

20*Ծանոթագրություն. Սույն ենթակետը վերաբերում է այն հարցի պարզմանը, թե արդյոք պետական օժանդակության ծրագիրը կիրառելի է միայն որոշակի տարածքի (մարզի, համայքի, այլ վարչական միավորի) կամ որոշակի որոշակի ոլորտի կամ որոշակի տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ, թե բոլոր տնտեսավարող սուբյեկտները կարող են դիմել պետական օժանդակության ստացման համար:

21*Ծանոթագրություն. Սույն ենթակետը վերաբերում է այն հարցի պարզմանը, թե արդյոք պետական օժանդակություն տրամադրելիս ստացողի ընտրության չափանիշ է համարվել առավել վաղ հայտ ներկայացնելու հանգամանքը:

Հաշվի առնելով «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի 16՝-րդ հոդվածի 3-րդ մասը՝ չեն լրացվում այն օժանդակությունները, որոնք տրամադրվում են օրենքի կամ միջազգային պայմանագրի հիման վրա՝ անորոշ թվով տնտեսավարող սուբյեկտների, և պետական օժանդակությունը տրամադրող մարմինը որևէ գնահատողական գործողություն չի իրականացնում:

Եթե 2-21-րդ աղյուսակներով սահմանված տեղեկություններից ցանկացածը վերաբերելի չէ տրամադրված կամ շարունակվող պետական օժանդակությանը, ապա պետական օժանդակություն տրամադրող մարմինն այդ դաշտում կատարում է «վերաբերելի չէ» գրառում: Այն դեպքերում, երբ 2-21-րդ աղյուսակներից յուրաքանչյուրով պահանջված տեղեկատվության վերաբերյալ տվյալներ առկա չեն, ապա կատարվում է «առկա չէ» գրառումը:

Սույն հավելվածի իմաստով շարունակվող պետական օժանդակություն է համարվում մինչև «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2020 թվականի հունվարի 24-ի ՀՕ-79-Ն օրենքն ուժի մեջ մտնելը տրամադրված և «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին»օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2020 թվականի հունվարի 24-ի ՀՕ-79-Ն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո շարունակվող պետական օժանդակությունը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ